ՀԱՅ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ
(Գևորգ Տիրացյանի ծննդյան 90-ամյակի առթիվ)

Լրացավ ականավոր հնագետ, հայագետ և պատմաբան Գևորգ Արտաշեսի Տիրացյանի ծննդյան 90-ամյակը: Տարիների հեռավորությունը թույլ է տալիս այժմ նկատել, թե որքան գործուն և բեղմնավոր եղավ նրա ապրած կյանքը: Նրան միանգամայն արժանիորեն շնորհված պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանը միայն մասամբ կարող է պատկերացում տալ ուսումնասիրողի աշխատասիրության և անցած ճանապարհի մասին: Տաղանդավոր գիտնականի կյանքի ուղին թեև ընդհատվեց անսպասելի ու անժամանակ, այդուհանդերձ, նրա թողած գիտական պատկառելի ժառանգությունն այսօր էլ հիացմունք ու ակնածանք է ներշնչում:

Գ. Ա. Տիրացյանը ծնվել է 1926 թ. սեպտեմբերի 18-ին Ռումինիայի Չետատեա-Ալբա քաղաքում ճանաչված մտավորական և մանկավարժ Արտաշես Տիրացյանի ընտանիքում: Դպրոցական տարիներին ստանալով հիմնավոր կրթություն՝ հայոց լեզու և պատմություն, ռուսերեն ու ռումիներեն սովորելու հետ միաժամանակ եվրոպական մի շարք այլ լեզուների տիրապետելով, 1945 թ. նա ընդունվում է Բուխարեստի համալսարանի պատմության ֆակուլտետը: Շուտով նրանց ընտանիքը հայրենադարձվում է: 1948 թ. նա արդեն Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանող էր: Ավարտում է համալսարանը և 1952 թ. ընդունվում Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտի նպատակային ասպիրանտուրա, ուր նրա գիտական ղեկավարն էր Բորիս Պիոտրովսկին: Ապագա գիտնական-հայագետի լայն մտահորիզոնի ձևավորման հարցում զգալի դեր են խաղացել նաև հռչակավոր Հովսեփ Օրբելին և լենինգրադյան արևելագիտական դպրոցի վառ ներկայացուցիչ Կամիլլա Տրևերը:

Հայ հնագիտությանն իր նպաստը բերող երիտասարդ գիտնականը 1956 թ. հաջողությամբ պաշտպանում է «Հայաստանի մ. թ. առաջին դարերի

նյութական մշակույթն ըստ Գառնիի դամբանադաշտի և բաղնիքի տվյալների» թեմայով ատենախոսությունը, որի համար 1957 թ. նրան շնորհվում է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Գ. Տիրացյանը 1956–1959 թթ. աշխատել է Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտում, իսկ 1959 թ. մինչև իր կյանքի ավարտը՝ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում: Սկզբում եղել է ավագ գիտաշխատող, 1974–1993 թթ.՝ Հին Հայաստանի հնագիտության բաժնի վարիչ, 1981–1988 թթ.՝ փոխտնօրեն, 1988–1993 թթ.՝ տնօրեն: 1986 թ. պաշտպանած «Հայաստանը մ. թ. ա. VI – մ. թ. III դարերում» վերնագրով ատենախոսության համար 1987 թ. նրան շնորհվում է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Մեծավաստակ հայագետը քառասուն տարի շարունակ իր գիտական տքնաջան ու արգասավոր գործունեությունը ծառայեցրել է մեկ հիմնական նպատակի՝ Հին Հայաստանի մշակույթի ուսումնասիրությանը՝ պատմագիտական ու հնագիտական բարձրարժեք աշխատություններում ընդգրկելով ավելի քան հազարամյա մի ժամանակաշրջան:

«Երվանդունիները Հայաստանում» (1958 թ.) ուսումնասիրությամբ տակավին երիտասարդ գիտնականը կարևոր ներդրում կատարեց պատմագիտության ասպարեզում: Այդ աշխատության մեջ առաջ է քաշվում այն տեսակետը, որ ուրարտացիներից հետո Հայկական լեռնաշխարհը վերամիավորելու նոր փորձ է կատարվել Երվանդունիների օրոք: Իշխող հաջորդ հարստությունների միավորիչ պետական քաղաքականության վրա այդ փորձի ունեցած ազդեցությունը պետք չէ անտեսել: «Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դար)» (ՊԲՀ, 1980, -4, էջ 84–95) և «Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դ. վերջ – III դ. վերջ)» (ՊԲՀ, 1981, -2, էջ 68–84) աշխատություններում, քննարկելով Երվանդյան Հայաստանի տարածքային փոփոխությունների խնդիրը, արվում է մի էական եզրակացություն՝ Հայկական լեռնաշխարհը հիշատակվում է որպես ամբողջական մեկ երկիր և մեկ անվան տակ՝ Արմինա, չնայած Դարեհ I-ի բարեփոխումներով այն բաժանվել էր երկու սատրապությունների:

Հին հայկական պետության առաջացումը միշտ եղել է Գ. Տիրացյանի պատմագիտական հետաքրքրությունների շրջանակում: Հ. Ժամկոչյանի «Հայաստանը նախնադարյան-համայնական հասարակության և ստրկատիրության շրջանում» գրախոսության մեջ («Տեղեկագիր», 1962, -4, էջ 87–95) մանրամասն քննարկել է հայոց բնօրրանում հայ-սկյութական առնչությունների խնդիրը: Շարադրելով Խորենացու տեղեկությունները Հայաստանում իշխող «Սկայորդիների դինաստիայի մասին», նշվում է, որ

Պատմահայրը հիշյալ հարստությունը համարում է բնիկ և այդ կապակցությամբ չի թաքցնում իր ուրախությունը: Գրախոսության հեղինակը համոզված է, որ Խորենացու հաղորդած տեղեկությունները Հայաստանում սկյութական հարստության գոյության մասին՝ Առաջավոր Ասիայում կիմերների և սկյութների պատմության հետ առնչվող «հանգամանքների և իրադարձությունների կնիքն են կրում»:

Պեղումները Գ. Տիրացյանի կյանքի կարևոր մասն էին կազմում, նա սիրում էր դաշտային աշխատանքը: Ականավոր հնագետը մասնակցել է Կարմիր բլուրի, Գառնիի, Արտաշատի պեղումներին, նաև պեղումներ է իրականացրել Հացավանում և Դովրիում, հնագիտական հետազոտություններ է կատարել Աշտարակի ու Նաիրիի տարածաշրջաններում: Նա Հայաստանի հին մայրաքաղաք Արմավիրում աշխատող հնագիտական արշավախմբի ղեկավարն էր 1970 թվականից ի վեր: Գ. Տիրացյանի և նրա գործընկերների ջանքերի շնորհիվ Հին Արմավիրը հայտնի է դարձել միջազգային գիտական հանրությանը, դրա պեղումների վերաբերյալ լույս են տեսել մի քանի տասնյակ գիտական աշխատություններ և դեռ շարունակվում են հրատարակվել: Մասնագիտության մեջ հմտանալու գործում շատերի համար Արմավիրը դարձավ հնագիտական անփոխարինելի դպրոց:

Գ. Տիրացյանի հնագիտական հետազոտությունների ոլորտը, սակայն, շատ ավելի լայն ու ընդգրկուն էր: Նրան հետաքրքրում էին Հայաստանի հնագիտության հարցերն ընդհանապես: Տաղանդաշատ հետազոտողն առաջինն էր, ով փորձեց լուծել հին հայկական մշակույթի պարբերացման խնդիրը, դրա համար օգտագործելով ձեռքի տակ եղած բոլոր աղբյուրագիտական տվյալները: Երկարատև գիտական ուսումնասիրությունների արդյունքում 1988 թ. ռուսերեն լեզվով լույս տեսավ Գ. Տիրացյանի «Հին Հայաստանի մշակույթը մ. թ. ա. VI – մ. թ. III դդ. (ըստ հնագիտական տվյալների)» հիմնարար աշխատությունը: Այս մենագրությունը կոչված էր դառնալու ինչպես հնագետների, այնպես էլ արևելագետների, պատմաբանների, արվեստաբանների ու մշակութաբանների սեղանի գիրքը: Անխոնջ գիտնականը լուրջ ներդրում է կատարել բազմաթիվ այլ կարևոր հարցերի լուսաբանման գործում՝ ասես չկարողանալով «տեղավորվել» իր իսկ ընտրած հազարամյա ժամանակահատվածի շրջանակներում: Նրա քննարկման առարկան են եղել թե՛ հին հայկական մշակույթի փոխառնչությունները Հայկական լեռնաշխարհի հնագույն մշակույթների հետ և Ուրարտու-Հայաստան հիմնախնդիրը, թե՛ Հայաստանի վաղմիջնադարյան մշակույթն ու նրա ակունքները: ««Անաբասիսը» և Հայաստանը», «Կոմագենե երկիրը և Հայաստանը» ու մի շարք այլ կնճռոտ հարցերի համակողմանի

քննությանը նպաստել են նրա գիտական լայնախոհությունը, հազվագյուտ ներըմբռնողականությունը, հին լեզուների (հին հունարեն, արամեերեն, լատիներեն) իմացությունը:

Միջազգային ճանաչում ունեցող գիտնականը «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական հրատարակության առաջին հատորի և «ԽՍՀՄ հնագիտության» հատորներից մեկի հեղինակներից է: Նա մի շարք հոդվածներ է տրամադրել նաև «Հայկական Սովետական հանրագիտարան»-ին. «Երվանդունիներ», «Ակունք», «Արմազի», «Հացավան»: Վաղաժամ մահվանից հետո էլ շարունակվում են տարբեր լեզուներով լույս տեսնել նրա տակավին անտիպ հոդվածներն ու մենագրությունները: Որտեղ էլ որ տպագրված լինեն Գ. Տիրացյանի ուսումնասիրությունները, նրա արտահայտած գաղափարներն առանձնանում են իրենց ինքնատիպությամբ, խորությամբ ու պարզությամբ: Նույնիսկ փոքրածավալ աշխատությունները յուրօրինակ ձևով ընդգրկուն են թեմատիկ առումով: Դրանցում դրսևորվում են ինչպես բազմահմուտ հայագետի, արհեստավարժ աղբյուրագետի, դիտունակ հնագետի, այնպես էլ խոհուն արևելագետի ու նրբակիրթ արվեստաբանի լայն մտահորիզոնը և ծավալուն գիտելիքները: Այդ գաղափարներն այսօր էլ գայթակղիչ ու արդիական են և, հուսով ենք, գնահատելի կլինեն վաղվա հայագետ-հետազոտողների համար ևս:

Զգայուն և նրբանկատ անձնավորություն էր Գ. Տիրացյանը: Նա ուշադիր էր նախորդ սերնդի իր գործընկերների նկատմամբ, պատեհ առիթներով երախտագիտության խոսք էր ուղղում նրանց և արժևորում ավագների գիտական վաստակը: Գիտության երախտավորներ Կ. Տրևերի, Բ. Պիոտրովսկու, Ս. Երեմյանի, Ա. Սահինյանի, Բ. Առաքելյանի կյանքը և գիտական գործունեությունը լուսաբանող նրա հակիրճ, բայց տարողունակ հոդվածները տպագրվել են գիտական հանդեսներում ու Հայկական սովետական հանրագիտարանում: Շատերի կարծիքով՝ նա հրաշալի գիտնական էր, շատերի համար էլ՝ անփոխարինելի ընկեր: Կյանքի մարդ էր, հոգով երիտասարդ, միշտ երիտասարդների կողքին էր, սիրում էր նրանց հետ քայլել ու զրուցել: Վարչական աշխատանքը չէր խանգարում նրան լինել բարեկիրթ և բարյացակամ մարդ, պայծառ մտավորական ու քաղաքացի:

Թող օրհնվի՛ քո ծնունդը, Գևորգ Տիրացյան:

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ,
ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ